ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունվարի 2025 թվականի № 9-Ա

ԱՆԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ՊՈՈՇՅԱՆԻ Պ. ՂԵՎՈՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի № 181-Ն որոշման հավելվածի 39-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ին № 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2024 թվականի դեկտեմբերի 20-ի № 133 արձանագրությունը՝ **որոշում եմ.**

1. ***Անգին Քաջիկի Հովսեփյանին*** 2025 թվականի հունվարի 13-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Պոոշյանի Պ. Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի հունվարի 19-ի *«Մարգարիտա Ավետիսյանին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Պոոշյանի Պ. Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից ազատելու մասին»* № 32-Ա որոշման 2-րդ կետը:

3 . Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՄԱՀԱԿՅԱՆ

2025 թվականի հունվարի 13
ք. Հրազդան